

Խաչատրյան Ն.Ն.
Երևանի պետական համալսարան, դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու
nonnakhachatryan@yahoo.com

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԵՐԸ ՍՓՑՈՒՌՔԻ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԼՆԹԱՑՈՒՄ**

Հիմնաբառեր. մարդկային կապիտալ, սոցիալական կապիտալ, տնտեսական ներուժ, գիտակրթական ներուժ

Փորձը ցույց է տալիս, որ արևմտյան երկրներում «ուղեղային կենտրոնների» աճի միտումները նպաստել են ակադեմիական շրջանակներից դուրս հումանիտար գիտական մտքի զարգացմանը և նոր որակ հաղորդել քաղաքագիտական-ռազմավարական մշակումներին: Այդպիսի մշակումներին բարձր պրոֆեսիոնալիզմ հաղորդելու նպատակով սփյուռք ունեցող տարբեր երկրներ սկսեցին օգտվել ԱՄՆ-ում, Եվրամիությունում աշխատող փորձագիտական ռեսուրսներից:

Սփյուռքի հումանիտար ոլորտի փորձագիտական ռեսուրսներից օգտվելու գործընթացն ինչ-որ յուրահատուկ ու դժվարին խնդիր չէր, ի տարբերություն ակադեմիականի (հատկապես բնագիտության ոլորտում), որը մեծ չափով ավելի դժվարընթաց էր՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Պետք է փաստել, որ սփյուռքի փորձագիտական ռեսուրսները մի քանի երկրների համար, այնուամենայնիվ, ներքինի համեմատ խիստ սահմանափակ էին: Հրեական, հնդկական, չինական, ճապոնական, հունական նորաստեղծ շատ գիտական կենտրոններ կանգնեցին կարևորագույն, այն է՝ ինտելեկտուալ ռեսուրսներով ապահովվելու խնդրի առջև: Սա ստիպեց, որպեսզի կենտրոններն օգտվեն սփյուռքի գիտական-փորձագիտական ռեսուրսներից՝ նպաստելով նաև միջազգային կապերի հաստատմանն արտերկրի նույնանման կառույցների հետ:

Մյուս կողմից՝ որոշ երկրների հաջողվել է առաջընթաց գրանցել՝ հասցնելով այդ կապերը ինստիտուցիոնալ մա-

կարդակի, մտավոր ռեսուրսներին ներգրավելով ցանցային (*network*) աշխատանքներում, կենտրոնանալով պետական առաջնահերթ նշանակության ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացի վրա: Ցանցային աշխատանքին զուգահեռ՝ մի շարք երկրներ, հետևողական աշխատանքի և տևական համագործակցության արդյունքում կարողացել են նաև նոր մակարդակ դուրս գալ՝ հիմնադրել վերլուծական կառույցներ արտերկրում:¹

Իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում գիտական սփյուռքի հետ աշխատանք ծավալելու չինացիների փորձը: Չինական սփյուռքի գիտավերլուծական կարողություններն առաջին հերթին օգտագործվեցին Չինաստանի տնտեսության մեջ բեկում մտցնելու նպատակով, երկրորդ՝ արտերկրում գործող քաղաքական և ռազմավարական հետազոտական ինստիտուտներում աշխատող չինացիները ԱՄՆ-Չինաստան ոչ այնքան բարենպաստ հարաբերություններում դարձան միջնորդող օղակ՝ հանդես գալով որպես Չինաստանի արտաքին քաղաքականությանն աջակցող ուժեր: 1998թ. չինական իշխանությունները քայլեր ձեռնարկեցին արտերկրի բարձր որակավորում ունեցող չինացի գիտնականներին և փորձագետներին ներգրավելու հեռավար և տեղում իրականացվող ծրագրերում, բավական բարձր վարձատրությամբ²: Այնպես որ, տնտեսական և քաղաքական շարժանիքներով էր պայմանավորված սփյուռքի ներուժի օգտագործումը: Այս ողջ շրջայական և անընդմեջ գործընթացն իրականացավ պետության անմիջական մասնակցությամբ: Այն հնարավոր դարձրեց սփյուռքի մտավոր/բիզնես էլիտայի համախմբումը տարբեր ոլորտներում առկա խնդրահարույց առաջադրանքների լուծման շուրջ, որը հետագայում մեծ արդյունքներ գրանցեց: Սփյուռքի մտավոր այդ հատվածին ներգրավեցին ոչ միայն կարծիքներ հայտնելու և քննարկումներ

¹ Արեստակես Սիմավորյան, //Սփյուռքի վերլուծական հանրույթը որպես պետության ներուժ. Միջազգային փորձը, Գլոբուս վերլուծական հանդես, թիվ 12, 2013, էջ 3

² Жуджунь Д, Ковалев М. Новик В, Феномен экономического развития Китая, Минск, БГУ, 2008, стр,27

անցկացնելու նպատակով, այլև նրանց վստահեցին գործնական քայլեր կատարել, որոնցից մեկն էլ տնտեսական բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությունն էր: Չինական փորձը ցույց տվեց, որ սփյուռքն անգնահատելի դերակատարում կարող է ունենալ ցանկացած ոլորտի զարգացման համար:

Այս առումով, հետաքրքիր է նաև Իսրայելի վարած քաղաքականությունը: Ինչպես Չինաստանը, այնպես էլ Իսրայելը փորձում էին սփյուռքի գիտական ներուժն օգտագործել նորաստեղծ երկրի տնտեսության զարգացման նպատակով: Ինչպես նշում է հետազոտող Հ.Մարությանը. «Փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող Իսրայել պետությունը, որը նաև շարունակական ռազմական հակամարտության մեջ է իր հարևանների մի մասի հետ, ստիպված է անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ երկրի առաջընթացի ապահովման համար»: ¹ Ամերիկա-իսրայելական գիտական համագործակցության շնորհիվ 1972թ. հիմնադրվեց Ամերիկա-իսրայելական գիտական հիմնադրամը (The U.S. – Israel Binational Science Foundation – BSF): Նշյալ հիմնադրամին հաջորդեց 1978թ. Գյուդաստնտեսության բնագավառում ամերիկա-իսրայելական հետազոտությունների և մշակումների համատեղ հիմնադրամը (United States-Israel Binational Agricultural Research and Development Fund – BARD), որը կոչված էր աջակցելու երկու երկրների գյուդաստնտեսության համար մեծ նշանակություն ունեցող հետազոտություններին և ինովացիաների զարգացմանը:

Գալով վերլուծական կենտրոններին՝ պետք է փաստենք, որ այդ ներուժից օգտվելու առաջին փորձերն Իսրայելն իրականացրեց 1950-ական թթ.: ԱՄՆ վերլուծական կենտրոնների շարքում քաղաքական շրջանակներում բավական մեծ հեղինակություն է վայելում Հանրային կապերի ամերիկա-իսրայելական կոմիտեն (American Israel Public Affairs Committee, AIPAC), որը համարվում է «ուղեղային կենտրոն»:

¹ Մարության Հ., Իսրայելի մրցունակությունը և գիտության դերը, «Գլոբուս, ազգային անվտանգություն», 2009, թիվ 4(8), էջ 42

Կենտրոնը հիմնադրվել է ամերիկաբնակ հրեաների կողմից 1954թ.: Նպատակն էր երիտասարդ հրեական պետության համար տնտեսական, քաղաքական և ռազմական աջակցության ապահովումը ԱՄՆ կառավարության կողմից:

AIPAC –ի անմիջական նախաձեռնությամբ Իսրայելը 1994թ. ԱՄՆ-ից տնտեսական և ռազմական ոլորտների զարգացման հեռանկարով ստացել է շուրջ \$3 մլրդ, որից 80 մլն նախատեսվել է հրեաների հայրենադարձության համար:¹ AIPAC-ը յուրաքանչյուր տարի նախագահների և վարչապետների մակարդակով կազմակերպում է խոշոր հավաքներ, քաղաքական բնույթի գիտաժողովներ՝ ԱՄՆ-ից և Իսրայելից հրավիրված քաղաքական գործիչների, երկու երկրների հայտնի քաղաքագետների, փորձագետների, գիտնականների մասնակցությամբ: Հատկանշական է, որ Իսրայելը ԱՄՆ ՈւԿ-ներում աշխատող ազգությամբ հրեա վերլուծաբանների հետ սկսեց համագործակցել հենց այս շրջանակներում տեղի ունեցած գիտաժողովներից հետո: Նրանցից շատերն այսօր համագործակցում են իսրայելական հեղինակավոր ռազմավարական հետազոտական կենտրոնների հետ՝ որպես ասոցիացված աշխատակիցներ²:

Վերջին տարիներին սփյուռքի գիտական ներուժին սկսել են ուշադրություն դարձնել ԱՊՀ մի շարք երկրներ՝ Ռուսաստանը³, Մոլդովան, Բելառուսը, որոնք դեռ նման ձևաչափով հնարավոր համագործակցության մեխանիզմների մշակման փուլում են: Հարկ է նշել, որ այդպիսի խոշոր նախագծերի իրականացման համար չափազանց մեծ կարևորություն է տրվում այս ուղղությամբ նեղ թեմատիկ գիտաժողովների անցկացմանը: Մասնավորապես, 2010թ. տարբեր երկրներից հրավիրված ռուսական ծագում ունեցող գիտնականների և ռազմավարական հետազոտություններ իրականացնող ինստիտուտների վերլուծաբանների անմիջական մասնակցությամբ Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ «Գիտական սփյուռքը և Ռուսաստանի գիտության ապագան» խորագրով գիտագործնական կոնֆերանս⁴:

¹ Лендман Ц., AIPAC хочет воевать.
[//news.putc.org/news/aipac_khochet_voevat/2012-08-211279](http://news.putc.org/news/aipac_khochet_voevat/2012-08-211279)

Միջազգային փորձին անդրադառնալիս հնարավոր չէ շրջանցել Թուրքիան, որի աշխատանքները, հատկապես «ուղեղային կենտրոնների» հետ, անմիջականորեն վերաբերում են նաև ՀՀ, ԼՂՀ և Սփյուռք եռամիասնությանը: Թուրքիան վերջին տասնամյակում մեծ ակտիվություն է ցուցաբերում արտերկրի փորձագիտական ռեսուրսներին պետական առաջնահերթ խնդիրներին հաղորդակից դարձնելու և ընդհանուր նպատակների շուրջ մոբիլիզացնելու հարցում: Կան բազմաթիվ կառույցներ, որոնք մոբիլիզացնում են արտերկրի թուրք ինտելեկտուալներին տարբեր ինստիտուտների, քաղաքական պլատֆորմների շուրջ, և այժմ նրանք, այսպես կոչված, «վերլուծաբանների համազգային լիգա» ստեղծելու ճանապարհին են:

Նման պայմաններում Հայաստանի գիտական և հատկապես փորձագիտական հանրույթը մշտապես բախվելու է այս կառույցների՝ թուրքական պետության կողմից հրամցվող տեսակետներին, առաջարկվող այս կամ այն քաղաքական բանաձևերին: Այս իրավիճակը մեզ թելադրում է համախմբել Հայաստանի և Սփյուռքի առկա գիտական, փորձագիտական մտավոր ռեսուրսները, ինչը թույլ կտա հայության առջև ծառայած ռազմավարական նշանակության ցանկացած հարցում կարծիքների և տեսակետների փոխանակման միջոցով ձևավորել ընդհանուր մտտեցում՝ թուրքական իշխանության քայլերին դիմագրավելու համար:

Սոցիալական կապիտալը կարևոր դերակատարում ունի սփյուռքի համախմբման գործընթացում: Անհատը փոխառնչվելով հասարակության հետ և ընդգրկվելով զանազան սոցիալ-տնտեսական կապերում, ձեռք է բերում յուրօրինակ փոխհարաբերություններ, դրանով ձևավորելով սոցիալական կապիտալ, որից հնարավոր է դառնում «օգուտներ» քաղել և բարենպաստ դիրքավորումներ ձեռքբերել աշխատավայրում, կենցաղում, ընկերային շրջապատում:

Հիմնականում, սոցիալական կապիտալը ձևավորվում է անհատների կողմից խմբային վարքագծի նորմերի, փոխադարձ վստահության և «ցանցային» գործունեության արդյունքում, որն էլ մարդկային կապիտալի կուտակված պաշարին նոր որակներ է հաղորդում: Մի կողմից, սոցիալական

կապիտալը հասարակության մեջ կարգավորիչ դերակատրում ունի, հիմնվելով փոխվստահության վարքագծային դրսևորումների վրա, դրանով իսկ ներգործելով մարդկային կապիտալի վերարտադրության վրա «հորիզոնական» ուղղությամբ, առանց պետության միջամտության: Մյուս կողմից, սոցիալական կապիտալի պաշարները էականորեն առնչվում են ֆորմալ ինստիտուտների գործունեության արդյունավետությանը, որով և սոցիալական կապիտալը ներգործում է մարդկային կապիտալի վերարտադրության վրա՝ «ուղղահայաց» ուղղությամբ:

Սոցիալական կապիտալը տեղեկատվություն է տարածում, ամրապնդում է վստահությունը գործարարության վստահությունը բիզնես գործընկերների միջև, անհատի դրական համբավը վերածում է հասարակության սեփականության, մոբիլիզացնում է հանրային ծրագրերի իրականացմանը նպատակաուղղվող ռեսուրսները, օժանդակում է բարեգործությանը, որով և հանդես է գալիս մարդկային կապիտալի որակական վերարտադրության արժեքավոր ռեսուրս: Այս առումով, մասնագիտական գրականությունում սոցիալական կապիտալը սահմանվում է որպես «հանրության ունակություն կոլեկտիվ ուժերով ընդհանուր նպատակներին հասնելու համար»¹:

Կոլեկտիվ համագործակցությունը նպաստում է սոցիալական ցանցերի ձևավորմանը, որով իրականացվում է տեղեկատվության փոխանակում և անգամ մասնակիցների միջև պայմանավորվածությունների ձեռքբերում, միտված ոչ միայն անձնական, այլև հանրային շահերի բավարարմանը: Մակայն, սոցիալական կապիտալը չի կարող դրսևորել արդյունավետ հատույց, եթե սոցիալական ցանցում ընդգրկված մասնակիցների միջև չդիտարկվի փոխվստահություն: Հետևաբար, ձևավորված կապերով համագործակցությունը, վարքագծային կոլեկտիվ նորմերը ինչպես նաև փոխվստահությունը ներկայանում են որպես սոցիալական կապիտալի

¹ Durlauf S., Fafchamps M. Social Capital // Handbook of Economic Growth / Ph. Aghion, S. Durlauf (eds.). Amsterdam: Elsevier, 2005. Vol. 1, B. Ch. 26. P. 639 - 699

հիմնասյուներ, և դրանցից որևէ մեկի բացակայությունը խարխուլում է սոցիալական կապերի հիմքերը¹:

Անհատի կողմից կուտակված սոցիալական կապիտալը նպաստում է սփյուռքահայության ամրապնդմանը՝ ի հաշիվ անձնական կապերի: Ձևավորված սոցիալական կապիտալի շնորհիվ տեղեկատվություն է ստացվում աշխատատեղերի թափուր տեղերի մասին, ցանկալի աշխատանքի տեղավորման հնարավորություններ են ստեղծվում «ծանոթ-ընկերների» օգնությամբ: Հատկապես, սոցիալական կապիտալի առկայության շնորհիվ աշխատանք գտնելու հնարավորությունները հենց հայաստանյան իրականությունում առավել ցայտուն են դրսևորվում:

Հայաստանը փոքր երկիր է, և ելնելով ազգային առանձնահատկություններից, այստեղ ծանոթ-բարեկամների ամենօրյա շփումները համեմատաբար առավել ակտիվ են դրսևորվում: Եվ ստացվում է այնպես, որ թափուր աշխատեղերը ավելի շատ լրացվում են ոչ թե ըստ մասնագետների արժանիքների, այլ «աջակիցների բարեխոսումների» արդյունքում: Այստեղ, հստակ իր դերակատարումն է ունենում սոցիալական կապիտալը, երբ մի կողմից գործատուի մոտ «բարեխոսի» վստահության առկայությամբ հաջողվում է աշխատանքի տեղավորել իր աջակցին, մյուս կողմից, աշխատանք փնտրողը օգուտներ է քաղում իր վարքագծային կոլեկտիվ նորմերի առկայությունից, օգտագործելով սեփական սոցիալական կապերը հասարակության մեջ և ստանալով ծանոթ-բարեկամների աջակցությունը աշխատանքի անցնելիս:

Սոցիալական կապիտալի առկայությունը ոչ միայն ծառայում է անհատի, այլև հասարակության շահերին: Այս առումով, սոցիալական կապիտալի շնորհիվ սփյուռքը նոր որակներ է ձեռքբերում, հատկապես անհատների ինքնակազմակերպման հատկանիշների բարելավման առումով:

¹ Putnam R. Op. cit.; Bjornskov Ch. The Multiple Effects of Social Capital // European Journal of Political Economy. 2006. Vol. 22, No 1. P. 22 - 40; Keefer Ph., Knack S. Social Capital, Social Norms and the New Institutional Economics // C. Menard, M. Shirley (eds.). Handbook of New Institutional Economics. Berlin, Heidelberg: Springer, 2005. P. 701 - 725.

Խմբային որոշումների կայացմանը ակտիվորեն մասնակցությունը, հանրային շահերի հետապնդումը, անձնական ամբիջիաներից ձերբազատման ունակությունները ոչ միայն հարստացնում են սոցիալական կապիտալը, այլև իրենց դրական հետազիծն են թողնում սփյուռքի որակական վերարտադրության վրա: Այստեղ արդեն դրսևորվում է սոցիալական կապիտալի «ուղղահայաց» ազդեցությունը սփյուռքի վրա, քանի որ անհատների ինքնակազմակերպման հատկությունների դրսևորումները և դրանց համակցումը խմբային շահերին, հանրային հնչեղության հիմնախնդիրներ են լուծում, որոնցով թերևս պետք է զբաղվեին հայրենական իշխանությունները:

Ամփոփում

Հայոց ցեղասպանության արդյունքում ձևավորված սփյուռքը ոչ միայն արտերկրներում բնակվող հայ ժողովրդի մի մասն է, որը որոշ չափով պահպանում է իր հոգևոր, մշակութային ինքնությունը և ձգտում չիզգել կապը պատմական հայրենիքի հետ, այլև, առաջին հերթին, այն անդրազգային ցանցն է, որը պարունակում է հսկայական սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական, մտավոր, տնտեսական ներուժ: Սփյուռքի գիտավերլուծական հանրության համախմբման, համագործակցության, Հայաստանի մտավոր շրջանակների հետ տարբեր ձևաչափերով կապերի հաստատման և համահայկական մտավոր ռեսուրսները Հայաստանի և հայության շահերին ի նպաստ դնելու մեխանիզմների մշակման, լուծման ուղիներ փնտրելու համար կարևոր է ուսումնասիրել այլ երկրների փորձը, որը ներկայացվում է հողվածում:

Хачатрян Н.Н.

Ереванский государственный университет, доцент,
кандидат экономических наук

РОЛЬ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА В КОНСОЛИДАЦИИ ДИАСПОРЫ

Ключевые слова: человеческий капитал, социальный капитал, экономический потенциал, научно-образовательный потенциал

РЕЗЮМЕ

После геноцида, образовавшаяся Армянская Диаспора в настоящее время состоит около 10 млн человек и действует на разных континентах мира. В этих условиях, становится необходимым консолидирование научных и экономических ресурсов с целью укрепления не только зарубежных общин армян, но и поддержки социально-экономического развития Республики Армения. В статье анализируется успешный опыт консолидации социально-экономического капитала в диаспорах разных наций и возможности его применения в Армянской Диаспоре.

Khachatryan N.N.

Yerevan State University, Doctor of Economics

THE ROLE OF HUMAN CAPITAL IN DIASPORA CONSOLIDATION

Kew words: human capital, social capital, economic potential, science educational potential

ABSTRACT

After genocide, formatted Armenian Diaspora currently includes about 10 million people and operates in different continents of the world. In these circumstances, it becomes necessary to consolidate the scientific and economic resources with the purpose to strengthen the abroad community not only Armenians, but also to support social and economic development of the Republic of Armenia. The paper analyzes the successful experience of the consolidation of social and economic capital in the Diaspora of different nations and its application opportunities in the Armenian Diaspora